# 395

ՀԵ 336, Էլմ. 661

1. Աստված օրհնե այն տունը
Երկնից լույսովն փայլուն,
Ուր որ անմեղ մանկուք կան՝
Դեմքով զվարթ, սիրուն:
Աստված օրհնե բարի մայրն
Եվ հայրը սիրելի,
Տերն պաշտպանե այն տունը
Եվ չարն վանե անդի:

2. Ավա՛ղ, ավա՛ղ դժբախտ տան,
Ուր Տերն է մոռցված,
Ուր Հիսուսի անունը
Երբեք չէ հարգված:
Ավա՛ղ, ավա՛ղ, դժբախտ տան՝
Դառն վիշտերով, տխուր,
Ուր ոչ հարմար զգեստ կա,
Եվ ոչ ալ՝ կերակուր:

3. Աստված օրհնե այն տունը,
Ուր Ինք կպաշտվի,
Եվ ուր աղոթք ամեն օր
Կելլե՝ նման խունկի:
Աստված օրհնե մեր տունը,
Այս հարկն ընտանեկան,
Եվ մեր բնակարանը
Ընե երկնից նման:

Պատրաստված է Հոգևոր Արխիվի Կողմից | hogevorarchive.com | ergaran.com | 2025